լցէ, բայց եթէ ոչ ոք ոչ ելցէ և ունլցի թուղթ հին վաճառման 'ի վեր յիշեցեալ տանն 'ի ձեռին իւրում։

ԳԼՈՒԽ ՅԾԳ.

Սահման հանելոյ վիճակս 'ի վերայ իւրաքանչիւր 100 տղայից որ ելցէ 'ի միջէ միայն հինգ տղայս վասն զինուորութեան, ընկալ երկու հարիւր կտոր թուղթս և գրէ անուն 100 տղայից, իւրաքանչ անուն 'ի վերայ մի թղթու, ամրափակեայ յատուկ յատուկ, այս 100 թուղթս ձգէ 'ի մէջ պարկի միոյ և առ միւսն 100 սպիտակ թուղթ 'ի վերայ 5 թղթոյ գրէ (Զինուոր) սա հինգ թուղթս զինուոր անուամբ հանդերձ 95 թուղթ սպիտակաւ որ բովանդակի 100, սա ևս ամրափակեայ և ձգէ 'ի այլ պարկս, և բազմացոյ ամենեցուն հանդարտ տեղիս և 'ի միջի նոցա յոտս կացո երկու պատանիս, և տուր նոցա 'ի վեր ասացեալ երկու պարկս որ ունի իւրաքանչիւր հարիւր թուղթն և հրամայէ նոցա խառնել և ապա նախ առնուլ յանունն Աստուծոյ 'ի բերանն և ապա իւրաքանչիւր տղայն դաստառակօք փակեա ակն նոցա և տուր հրաման իւրաքանչ տղայն 'ի պարկէ իւրմէ հանել միմիայն մի թուղթ, որում անուն հանեալ գտցի 'ի միւս պարկէն անուն (Զինուոր) նմայ ելաւ վիճակ զինուորութեան և որում տղայն անուն իւր ելցէ